



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013թ. երկրորդ կիսամյակում / վերլուծություն /

2013թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 102991 գործարքներ, որոնց քանակը, 2013թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 17.4%-ով, իսկ 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 9.5%-ով :

2013թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 26699 օտարման գործարքների 74.0%-ը կազմել են առուվաճառքները, 25.3%-ը՝ նվիրատվությունները և 0.7%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 41.8%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 39.8%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2013թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2013թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել է 21.3%-ով, իսկ 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 3.0%-ով: 2013թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 8226 առուվաճառքի գործարքների 61.0%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2013թ. երկրորդ կիսամյակում, 2013թ. առաջին կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 30.0%-ով, իսկ 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 18.4%-ով:

2013թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	երկրորդ կիսամյակ 2012թ.	երկրորդ կիսամյակ 2013թ.	առաջին կիսամյակ 2013թ.
Կենտրոն	418500	428000	426000
Արաբկիր	346200	356600	353700
Քանաքեռ-Զեյթուն	274700	282500	281250
Նոր-Նորք	237800	251500	248000
Ավան	246900	259600	257200
Էրեբունի	240700	249300	246900
Շենգավիթ	243800	255200	252550
Դավթաշեն	266200	274800	272150
Աջափնյակ	234500	248400	244800
Մալաթիա-Սեբաստիա	231500	241500	237500
Նուբարաշեն	142000	152800	149000
<b>Միջինը Երևանում</b>	<b>262100</b>	<b>272700</b>	<b>269900</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2013թ. երկրորդ կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները, 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ, աճել են 4.0%-ով, իսկ 2013թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 1.0%-ով:

2013թ. երկրորդ կիսամյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 2579 բնակարաններ, որոնց քանակը, 2013թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել է 26.9%-ով, իսկ 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 5.9%-ով:

2013թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		երկրորդ կիսամյակ 2012թ.	երկրորդ կիսամյակ 2013թ.	առաջին կիսամյակ 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	113400	115000	114500
	Ապարան	50700	56900	55500
	Թալին	61200	64700	63300
Արարատ	Արտաշատ	93300	94900	94650
	Մասիս	110700	115000	113900
	Վեդի	97600	99900	98900

	Արարատ	74200	75200	75100
Արմավիր	Վաղարշապատ	153200	154100	153800
	Արմավիր	118700	121200	120500
	Մեծամոր	86400	87500	87200
Գեղարքունիք	Սևան	99000	99150	99100
	Գավառ	54900	59400	58900
	Մարտունի	106800	107600	107600
	Վարդենիս	38900	44600	43400
	Ճամբարակ	23800	28400	27200
Լոռի	Վանաձոր	87100	88400	88100
	Ստեփանավան	74300	74500	74500
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	52300	55000	54800
	Տաշիր	43600	47200	45850
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
Կոտայք	Աբովյան	153100	155100	154100
	Նոր Հաճն	128400	128600	128500
	Բյուրեղավան	107100	108100	107800
	Եղվարդ	109000	109300	109300
	Հրազդան	60500	63800	63400
	Ծաղկաձոր	292500	292500	292500
	Չարենցավան	84000	85500	85200
Շիրակ	Գյումրի	109000	109300	109300
	Արթիկ	64700	66500	66300
	Մարալիկ	37700	40400	40100
Սյունիք	Գորիս	115600	121700	119550
	Կապան	90200	92200	91500
	Սիսիան	85000	91100	90225
	Մեղրի	71600	80400	78575
	Ագարակ	43700	46500	45400
	Քաջարան	94200	94600	94300
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	88000	95000	93700
	Եղեգնաձոր	117900	124600	121500
	Ջերմուկ	105500	112300	111400
Տավուշ	Դիլիջան	106400	113100	111200
	Իջևան	115000	118300	117600
	Բերդ	53800	60100	59000
	Նոյեմբերյան	43500	49600	48000
	Այրում	26000	31700	30400

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները, 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ, աճել են 3.5%-ով, իսկ 2013թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 0.8%-ով:

2013թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 2778 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևանում՝ 768, մարզերում միասին վերցրած՝ 2010: 2013թ. առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 22.3%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 29.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 19.6%-ով: 2013թ. երկրորդ կիսամյակում, 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը

աճել է 4.4%-ով, ընդ որում, Երևան քաղաքում նվազել՝ 2.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 7.1%-ով:

2013թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	երկրորդ կիսամյակ 2012թ.	երկրորդ կիսամյակ 2013թ.	առաջին կիսամյակ 2013թ.
Կենտրոն	467100	476100	474400
Արաբկիր	373900	383000	381300
Քանաքեռ Զեյթուն	285100	295000	293600
Նորք Մարաշ	310800	319200	317600
Ավան	263800	270500	269400
Էրեբունի	231300	239500	238200
Շենգավիթ	248200	255000	253700
Դավթաշեն	266800	276000	274700
Աջափնյակ	241600	250050	248400
Մալաթիա Սեբաստիա	231200	238000	236800
Նուբարաշեն	145300	150500	149400
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	<b>278600</b>	<b>286600</b>	<b>285200</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2013թ. երկրորդ կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ, աճել են 2.9%-ով, իսկ 2013թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 0.5%-ով:

2013թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		երկրորդ կիսամյակ 2012թ.	երկրորդ կիսամյակ 2013թ.	առաջին կիսամյակ 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	134500	136200	135900
	Ապարան	55200	60000	59550
	Թալին	68600	69250	68900
Արարատ	Արտաշատ	98500	100000	99550
	Մասիս	112700	115100	114750
	Վեդի	100400	102300	101850
Արարատ	Արարատ	87300	88000	87950
	Վաղարշապատ	152200	153100	152800
	Արմավիր	105500	107000	106800
Գեղարքունիք	Սևան	94200	94800	94600
	Գավառ	53400	57100	57000
	Մարտունի	93900	96100	95600

	Վարդենիս	35500	41000	40300
	Ճամբարակ	27000	31100	30500
Լոռի	Վանաձոր	98200	100000	99700
	Ստեփանավան	87800	90000	89600
	Սպիտակ	113500	114000	113900
	Ալավերդի	47300	50200	49100
	Տաշիր	50900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	13200	14000	13700
	Ախթալա	29500	30000	29900
	Կոտայք	Աբովյան	154500	157000
Նոր Հաճն		129800	129800	129800
Բյուրեղավան		120000	120500	120300
Եղվարդ		115800	116100	116100
Հրազդան		80000	82600	82500
Ծաղկաձոր		305000	305000	305000
Չարենցավան		82400	83000	82800
Շիրակի	Գյումրի	117500	118500	118300
	Արթիկ	61900	63100	63100
	Մարալիկ	49800	52000	51900
Սյունիք	Գորիս	127300	130000	129700
	Կապան	98300	100000	99500
	Սիսիան	90500	96500	95250
	Մեղրի	78400	84500	82800
	Ագարակ	46300	46900	46900
	Դաստակերտ	11600	11600	11600
Վայոց Ձոր	Վայք	87400	90000	89500
	Եղեգնաձոր	114100	116600	116600
	Ջերմուկ	123600	131300	130500
Տավուշ	Դիլիջան	109100	113000	112000
	Իջևան	121700	123200	122550
	Բերդ	58400	60100	59500
	Նոյեմբերյան	46100	48300	47400
	Այրում	34500	36200	35450

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 2.4%-ով, իսկ 2013թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 0.4%-ով:

Ընդհանուր առմամբ, 2013թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում օտարվել են 8396 միավոր /3676.77 հա/ հողեր, որից Երևանում՝ 934 միավոր /89.30 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 4452 միավոր /3329.97 հա/, որից Երևանում՝ 43 միավոր /40.79 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 2653 միավոր /220.91 հա/, որից Երևանում՝ 447 միավոր /18.02 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 1060 միավոր /68.58 հա/, որից Երևանում՝ 411 միավոր /28.31 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 89 միավոր /28.16 հա/, որից Երևանում՝ 33 միավոր /2.18 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 54 միավոր /25.36 հա/,

• հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 87 միավոր /3.15 հա/

• անտառային հողեր՝ 1 միավոր /0.64 հա/ ընդհանուր մակերեսով:

2013թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում օտարված հողերից 6849 միավորի /2997.55 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 788 միավոր /46.96 հա/, նվիրատվության գործարքներ՝ 1467 միավոր /655.73 հա/, որից Երևանում՝ 125 միավոր /41.02 հա/ և փոխանակության գործարքներ՝ 80 միավոր /23.49 հա/, որից Երևանում՝ 21 միավոր /1.32 հա/:

Հանրապետությունում 2013թ. երկրորդ կիսամյակում, 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 7.0%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 7.9%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 7.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 3.8%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 762.71 հա, որից 733.07 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 25.3%-ը կամ 1733 գործարքներ /463.26 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 449 միավոր /12.35 հա/, իսկ 74.0%-ը կամ 5069 միավորը /2526.91 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 338 միավոր /34.47 հա/:

2013թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 47 գործարք /7.38 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2013թ. երկրորդ կիսամյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, անտառային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	10	0.31	174	1.13	265	10.91	34	6.85	21	1.79	188	12.97	95	12.86
Արագածոտն	82	34.42	6	2.23	11	0.51	35	2.69	415	305.77	0	0.00	164	17.88	8	1.22
Արարատ	101	97.05	3	1.02	61	4.11	43	0.48	444	198.13	1	0.42	265	23.18	19	0.35
Արմավիր	28	79.93	2	0.23	19	1.66	27	0.75	520	653.14	0	0.00	268	26.73	10	0.27
Գեղարքունիք	9	21.40	3	5.06	29	2.40	36	2.28	558	284.51	2	0.25	67	8.92	6	0.54
Լոռի	19	4.90	6	0.24	37	1.27	53	1.38	213	125.85	2	2.01	58	6.94	10	0.13
Կոտայք	53	98.11	6	0.52	124	6.64	132	2.77	497	300.50	2	5.92	419	34.58	60	9.16
Շիրակ	6	7.10	0	0.00	40	1.11	21	1.14	200	201.05	2	1.40	75	9.51	12	0.47
Սյունիք	12	9.89	5	4.60	16	0.68	18	0.27	108	118.33	2	0.06	25	2.22	10	0.33
Վայոց ձոր	19	29.38	6	1.18	2	0.10	8	0.80	67	81.78	0	0.00	21	2.36	6	0.32
Տավուշ	20	10.09	0	0.00	40	2.20	42	2.37	102	47.93	3	0.41	52	7.43	15	2.92
Ընդամենը	349	392.27	47	15.39	553	21.81	680	25.84	3158	2323.84	35	12.26	1602	152.72	251	28.57

Ստորև ներկայացվում է 2013թ. երկրորդ կիսամյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար

Նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք											
	Ընդամենը		Արդյունաբեր օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր					
					բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատման հողերի								բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատման հողերի			
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	327	6.51	10	0.31	174	1.13	143	5.07	122	5.84	0	0.00	0	0.00	0	0.00	122	5.84		
Արագածոտն	11	0.33	1	0.09	1	0.02	9	0.22	79	30.94	38	25.84	5	2.13	10	0.50	26	2.47		
Արարատ	10	0.11	1	0.02	1	0.06	8	0.03	191	93.77	94	88.26	2	1.00	60	4.06	35	0.45		
Արմավիր	12	0.34	1	0.10	0	0.00	11	0.24	61	81.01	25	78.71	1	0.13	19	1.66	16	0.51		
Գեղարքունիք	6	0.36	0	0.00	3	0.22	3	0.14	70	29.55	8	20.17	3	5.06	26	2.17	33	2.15		
Լոռի	25	0.27	1	0.10	9	0.06	15	0.11	87	6.69	16	4.06	5	0.14	28	1.21	38	1.28		
Կոտայք	15	1.74	0	0.00	10	0.66	5	1.08	295	105.77	48	97.58	6	0.52	114	5.98	127	1.69		
Շիրակ	20	0.46	0	0.00	15	0.39	5	0.07	46	6.84	5	5.05	0	0.00	25	0.72	16	1.07		
Սյունիք	18	2.70	1	2.16	9	0.47	8	0.07	32	9.55	11	6.69	4	2.45	7	0.20	10	0.21		
Վայոց Ձոր	1	0.005	0	0.00	0	0.00	1	0.005	31	29.33	16	27.26	6	1.18	2	0.10	7	0.79		
Տավուշ	13	0.89	0	0.00	5	0.08	8	0.81	89	13.77	20	10.09	0	0.00	35	2.12	34	1.56		
Ընդամենը	458	13.72	15	2.78	227	3.09	216	7.85	1103	413.06	281	363.71	32	12.61	326	18.72	464	18.02		

Հանրապետությունում 2013թ. երկրորդ կիսամյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 68 գործարքներ /28.54 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2013թ. երկրորդ կիսամյակում, 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 22.5%-ով: Ընդ որում, Երևանում աճել է 62.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 27.2%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 26.4%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 30.3%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 11.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 25.6%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. երկրորդ կիսամյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	23	11.50	22.3	7609.5	619.7	268	124.41	365.0	12000.0	3603.7
Ապարան	2	0.31	380.0	1165.5	772.8	54	32.61	86.5	2727.3	729.2
Թալին	12	13.74	37.7	200.0	102.8	51	67.05	93.6	5494.5	686.8
Ծաղկահովիտ	1	0.30	2220.0	2220.0	2220.0	34	70.79	79.5	1000.0	287.8

Արարատի մարզ										
Արտաշատ	19	4.34	75.9	3100.3	1391.6	217	66.88	335.1	10833.3	2728.1
Մասիս	29	34.41	55.5	4161.1	1065.6	100.0	74.18	200.0	11904.8	3048.4
Վեդի	46	49.51	33.3	1159.3	207.4	122	55.00	207.0	10795.1	1844.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	6	37.19	63.0	2205.0	574.1	253	167.81	294.3	9090.0	1279.2
Բաղրամյան	8	34.98	67.5	70.9	69.8	80	323.29	90.6	2561.1	770.0
Վաղարշապատ	11	6.54	60.8	1891.9	550.0	162	98.00	444.4	11764.7	2261.1
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	0.02	700.0	700.0	700.0	427	128.02	199.8	1875.0	429.6
Ճամբարակ	1	0.34	479.6	479.6	479.6	10	21.60	60.5	953.3	355.2
Մարտունի	1	0.05	668.0	668.0	668.0	43	6.43	51.1	2850.0	740.7
Սևան	1	0.60	124.5	124.5	124.5	24	15.11	52.2	2134.8	321.5
Վարդենիս	4	19.17	44.0	678.7	259.2	47	106.00	41.2	2575.1	421.8
Լոռու մարզ										
Ալավերդի	4	0.54	281.4	3762.0	2245.3	45	23.28	170.4	6424.2	572.3
Գուգարք						58	17.89	234.6	6065.9	777.6
Սպիտակ						2	0.59	250.0	5555.5	730.8
Ստեփանավան	12	3.52	184.7	747.3	518.0	36	29.16	90.6	1686.6	335.2
Տաշիր						64	35.10	45.3	1384.4	163.5
Կոտայքի մարզ										
Աբովյան	22	12.71	75.1	2396.2	513.8	187	89.64	279.3	11942.7	4195.0
Եղվարդ	20	80.77	68.9	1754.5	592.8	197	153.09	174.4	11971.8	2473.6
Հրազդան	6	4.10	44.1	1100.0	466.5	112	57.65	130.5	10256.4	1526.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	4	2.24	66.1	687.5	301.9	81	60.78	252.0	1693.1	631.6
Ամասիա	1	2.81	154.0	154.0	154.0	6	25.44	40.9	261.0	125.8
Անի						53	69.67	110.6	546.9	397.0
Աշոցք						10	12.62	58.5	215.8	129.7
Արթիկ						50	32.54	79.4	1428.6	427.7
Սյունիքի մարզ										
Գորիս	4	1.91	500.0	500.0	500.0	15	16.98	92.6	1023.2	734.8
Կապան	6	4.77	488.3	1785.0	779.5	12	6.88	120.0	841.6	369.0
Մեղրի	1	0.02	41000.0	41000.0	41000.0	13	1.25	193.0	3000.0	734.4
Սիսիան						67	93.07	46.3	1977.4	554.7
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	15	21.44	35.4	328.6	131.1	30	58.92	125.0	10000.0	1929.2
Վայք	1	5.82	38.8	38.8	38.8	36	22.74	58.8	1430.7	638.5
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.20	1775.0	1775.0	1775.0	28	6.64	213.3	3783.8	686.3
Իջևան	16	8.02	154.6	4583.3	881.1	22	14.91	267.5	9454.5	1246.0
Նոյեմբերյան	3	1.87	219.3	4802.4	2786.0	51	25.39	46.7	7368.4	897.9

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. երկրորդ կիսամյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների			Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների		
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/



			Նվազագույն	Մասնականագույն	Միջին			Նվազագույն	Մասնականագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	7	1365.7	112.7	4040.4	2670.9	132	128970.2	130.7	22200.0	2580.8
Ապարան	1	1680.0	452.0	452.0	452.0	17	18776.0	124.1	609.6	390.0
Թալին	2	1945.0	75.6	158.8	117.2	10	19260.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						2	6715.0	60.0	214.3	91.8
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	10	9929.3	268.1	5308.3	917.5	77	77837.3	173.9	7140.3	897.8
Մասիս	42	26117.2	841.3	3565.0	1465.7	129	81206.2	187.5	25000.0	1206.8
Վեդի	8	4509.4	645.8	1612.9	773.6	59	72799.3	126.1	5000.0	660.8
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	6	5222.9	316.9	4116.0	2537.6	113	125674.5	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան						5	6040.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	13	11381.0	95.9	3151.3	891.5	146	130389.0	197.4	26528.4	1530.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	4	4411.0	268.4	280.2	273.8	10	12758.2	186.6	1084.3	683.3
Ճամբարակ						1	1756.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	16	14496.0	113.8	330.0	234.3	40	53443.3	119.3	5000.0	281.7
Սևան	5	2683.3	127.8	714.2	528.4	6	6276.0	240.0	3110.4	317.5
Վարդենիս	1	151.8	1200.0	1200.0	1200.0	6	10375.0	72.5	987.2	150.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	7	285.4	778.8	1650.0	1459.0	18	24065.0	114.3	1388.9	217.0
Գուգարք	15	7097.3	151.2	3234.0	2058.6	20	22806.3	77.9	14083.3	1259.4
Սալիտակ	3	3076.5	153.3	677.3	311.2	11	11843.3	104.9	1348.3	206.5
Ստեփանավան	1	1500.0	187.2	187.2	187.2	8	9223.3	88.2	1666.7	175.5
Տաշիր	2	112.0	587.8	622.0	604.9	1	1490.0	45.3	400.0	90.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Արվյան	98	45478.1	275.5	5672.2	2736.1	192	148235.7	264.5	35353.5	1991.8
Եղվարդ	14	13452.5	230.0	5062.5	1703.7	197	165608.9	173.6	27000.0	2857.7
Հրազդան	2	899.0	4750.0	4750.2	4750.1	26	25550.5	117.7	34848.5	1317.5
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	9	1977.6	1150.0	4182.6	2313.1	33	25286.2	113.6	18750.0	334.5
Ամասիա	2	629.0	165.2	165.4	165.3	3	10910.0	45.3	274.7	71.0
Անի	6	2400.0	346.8	351.8	349.3	9	9926.1	67.9	180.6	176.7
Աշոցք						3	17280.0	40.8	144.0	63.7
Արթիկ	8	2184.5	279.2	3933.3	1357.4	25	31131.8	111.8	5000.0	217.5
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս	1	902.0	425.3	425.3	425.3	6	7881.0	112.2	1700.0	367.5
Կապան	6	1140.7	244.2	2600.0	1437.6	6	3441.0	67.9	2638.9	304.6
Մեղրի						7	4020.5	68.5	632.9	217.1
Սիսիան						6	6875.0	123.5	875.0	212.6
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր						18	17473.4	96.7	7659.6	505.3
Վայք	2	975.2	856.5	931.5	894.0	3	6115.0	120.7	1448.3	225.5
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ	1	2427.0	891.2	891.2	891.2	6	7940.5	75.8	810.0	120.0
Իջևան	29	14358.1	151.3	3000.0	2199.3	39	58433.4	74.1	14423.1	514.1
Նոյեմբերյան	5	4428.0	176.0	1650.9	939.9	7	7906.9	125.0	1948.1	230.0

2013թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4314 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.2%-ը:

2013թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը, 2013թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել է 2.0%-ով, իսկ 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 9.6%-ով :

2013թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 277 բնակարանների, 470 անհատական բնակելի տների, 1843 հասարակական և 495 արտադրական նշանակության օբյեկտների, 1137 միավոր /2278.88 հա/ հողերի, 3 այգետնակների և 89 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2013թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 64 վարձակալության գործարքների, այդ թվում 20 միավոր /0.54 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2013թ. առաջին կիսամյակի համեմատ նվազել է 36.0%-ով, իսկ 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել՝ 56.1%-ով:

2013թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում վարձակալված 2278.88 հա հողերից 7.73 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 2271.15 հա հողերի 46.32 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 0.62 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արագածոտնի մարզում՝ 545.25 հա, որից 517.74 հա՝ գյուղատնտեսական նշանակության: 2013թ. երկրորդ կիսամյակում հանրապետության մարզերում վարձակալվել են 2148.39 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2013թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 13600 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.2%: 2013թ. երկրորդ կիսամյակում գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 30.1%-ով, իսկ 2012թ. երկրորդ համեմատ՝ 13.2%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /52.3%/, առանձնատների /24.1%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.8%/ և հողերի /7.2%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7645 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել է 37.7%-ով, իսկ 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 21.3%-ով:

2013թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 1087 գործարքներ, որից 755՝ Երևանում: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2013թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել է 34.5%-ով, ընդ որում Երևանում՝ 37.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 28.7%-ով: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ, աճել է 12.2%-ով, ընդ որում Երևանում՝ 19.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 1.2%-ով:

2013թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրավադրվել են 1827.46 հա մակերեսով հողեր, որից 102.64 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 89.3% կամ 1631.28 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 4.60 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 866.24 հա, որից 840.85 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 11072 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2013թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել է 5.0%-ով, իսկ 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 17.2%-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 10.8%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /30.0%/:

## **«Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**